

ՄՏԵՓԱՆՈՍ ԱՅՈՒՆԵՑՈՒ ՇԱՐՎԿԱՆՆԵՐԸ

ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ

Մինչև 8-րդ դարը, ինչպես նաև հետագայում բավականին տևական ժամանակ նոր երգերի մուտքը եկեղեցի ազատ է եղել: Դա նպաստել է, որ հորինվեն մեծ թվով կցուրդներ, զանազան հոգևոր երգեր, և հեղինակները հույս են ունեցել, որ դրանք իրենց տեղը կգտնեն ժամերգություններում: Չնայած հոգևոր երգերի առատությանը՝ մինչև 8-րդ դար ո՛չ հույները և ո՛չ էլ առավել ևս հայերը եկեղեցական տոների համար հատուկ երգեր չեն ունեցել: Ութերորդ դարում եկեղեցական արարողություններ է մուտք գործել *կանոնը*, որը նպաստել է ինչպես նոր հոգևոր երգերի ծննդին, այնպես էլ կանոնակարգմանը: Աշխատել են, որ ամեն մի եկեղեցական տոն ունենա համապատասխան երգ կամ երգերի շարք: Այսպիսով ամենօրյա ժամերգության մեջ է մտել *կանոնը*:

Հույն եկեղեցական սրբասացության մեջ *կանոնի* հեղինակ է համարվում Կրետեի արքեպիսկոպոս Անդրեասը (մոտ 650-720 թթ.), իսկ հետագայում զարգացում է ապրել շնորհիվ Հովհաննես Դամասկացու¹: «Կանոնները կազմվում են 8 կամ 9 տարբեր երգերից, որոնցից յուրաքանչյուրն առանձին կազմություն ունի և բաղկացած է եղել սկզբնապես ավելի, հետագայում մեծ մասամբ 3 կամ 4 տնից: Երգերի իննյակ թիվը համապատասխանում է Հին Կտակարանի 9 երգերին, որ քրիստոնյաները հնագույն ժամանակներից ի վեր երգում էին սովորաբար»²: Կանոնների այս մույն կարգը ներմուծվում է նաև հայկական եկեղեցական սրբասացության մեջ: *Կանոնը* բաղկացած է 8 երգից.

1. **Օրհնութիւն**, որ երգվում է գիշերային ժամերգության ժամանակ Մովսես մարգարեի «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» օրհնությունից հետո իբրև կցուրդ:

2. **Հարց**, որ երգվում է իբրև կցուրդ *Երից Մանկանց* «Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց» օրհնության:

3. **Գործք** կամ **գործատուն**, որ նախորդ օրհնության (*Երից Մանկանց*)՝ «Օրհնեցէք, ամենայն գործք Տեառն, զՏէր» մասի կցուրդն է:

4. **Մեծացուսցէ**, որ երգվում է իբրև կցուրդ Ս. Աստվածածնի փառաբանության՝ «Մեծացուսցէ անձն իմ զՏէր»:

5. **Ողորմեա**, կցուրդ «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում» սաղմոսի:

6. **Տէր յերկնից**, կցուրդ «Օրհնեցէք զՏէր յերկնից» սաղմոսի:

Այս վեցն էլ երգվում է առավոտյան ժամերգության ժամանակ:

7. **Ճաշու**, որ տարբեր սաղմոսների կցուրդ է և երգվում է *Ճաշու ժամերգութեան* ժամանակ:

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 9, Եր., 1968, էջ 536:

² Krumbacher K. Geschichte der Byzantinischen Litteratur, 1897, s. 695.

8. **Յամբարծի**, որ կցուրդ է երեկոյան ժամերգութեան «Յամբարծի գաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն» սաղմոսի:

Երգերի այս շարքը հունարենի նմանողութեամբ անվանում են *կանոն*, հաճախ նաև՝ *կարգ*, օրինակ՝ Կարգ Աւագ շաբաթուն, Կարգ Ծննդեան, Կարգ Ապաշխարութեան և այլն: Միայն մի դեպքում գործածվում է *սարք* բառը. մի երգ «իւր սարաւքն», որը նշանակում է մի «օրհնութիւն» կամ «հարց» նույն կարգին պատկանող մյուս երգերի հետ միասին³: *Կանոնի* յուրաքանչյուր առանձին երգ կոչվում է *շարական*, իսկ երգերի ժողովածուն ըստ կանոնների՝ *Շարակնոց*:

Կանոնը հայոց հոգևոր սրբասացութեան մեջ ներմուծել է Ստեփանոս Սյունեցին 8-րդ դարում: Նա համարվել է ժամանակի նշանավոր գիտնականներից մեկը: Ստեփանոս Սյունեցին, ինչպես ավանդում է նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, «էր սա որդի աւագ երիցու մեծ մայրաքաղաքին Յայոց Դվնայ և սնանէր և զարգանայր ուսմամբ ի տան կաթողիկոսարանին Յայոց»⁴: Նախնական կրթությունը ստացել է կաթողիկոսարանում, ապա Մաքենոցաց վանքում, որտեղ աշակերտել է «հարանց հայր» Սողոմոնին, «որ և յօրինեաց զպայծառացուցիչն տօնից տէրունականաց և զյիշատակս մարտիրոսաց զՏօնականն ի 150 (150+551-701) թուին Յայոց»⁵: Ապա Սյունեցին կրթությունը շարունակում է Սյունյաց վարդապետարանում «յաղբիւրն իմաստից՝ ի վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց Յայոց, և պայծառացեալ դպրոցքն, որ ի նմա», որտեղ և աշակերտում է Մովսէս Սյունեցի եպիսկոպոսին: Մ. Սյունեցու մահից հետո Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրվում Անանիան, իսկ Ստեփանոսը իր ծառայությունը կաթողիկոսարանում սկսում է Եղիայի ժամանակ և հռչակվում է Սուրբ Գրոց մեկնություններով և տոնապատճառի ճառերով⁶:

Սյունեցին մի առիթով վիճում է իշխան Սմբատ Բագրատունու հետ. «Ապա եղև նմա հակաճառել վասն հաւատոյ ընդ երկաթնակ իշխանի միոյ, որ էր ասպետ Յայոց՝ Սմբատ Բագրատունի. և զի ոչ էր հմուտ արտաքին փիլիսոփայական արհեստին, ոչ հաւանեցաւ իշխանն բանից նորա. այլ անարգեաց զՍտեփաննոս տգէտ կոչելով և կամէր հալածել»⁷: Այս վեճից հետո նա հարկադրաբար հեռանում է քաղաքից դեպի Խաղտյաց կողմերը, ապա՝ Յռոմ: 728 թ. վերադառնում է Դվին և ներկայանում Դավիթ Ա Արամոնեցի հայրապետին⁸: Այդ ժամանակ վախճանվում է Սյունյաց եպիսկոպոսը: Եվ Սյունյաց Բաբկեն և Քուրդ նախարարների խնդրանքով Դավիթ հայրապետը Ստեփանոս Սյունեցուն նշանակում է Սյունյաց եպիսկոպոս: Մաղաքիա արք. Օրմանյանն այսպես է բնութագրում նրա եպիսկոպոսական գործունեությունը. «Ստեփանոս ունեցած հմտութեամբ եւ ժրութեամբ կը ձեռնարկէ ամէն կերպ բարեկար-

³ Տե՛ս նույն տեղը, էջ 537:

⁴ «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 130-144:

⁵ Նույն տեղում, էջ 130-144:

⁶ Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, Ա հատոր, Էջմիածին, 2001, էջ 1004:

⁷ «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, արքեպիսկոպոսի Սիւնեաց», էջ 130-144:

⁸ Տե՛ս «Յայկական վարքեր և վկայաբանություններ V-XV դդ.», Եր., 1998, էջ 34-35:

գութիւններով ճոխացնել իր վիճակը, մանաւանդ թէ բովանդակ Յայ եկեղեցին, քարոզելով եւ գրելով, անկարգութիւններ դարձանելով եւ եկեղեցական պաշտամունքը ճոխացնելով»⁹: Սյունեցին նույնքան նախանձա-հույզ էր նաև իր հոտի վարք ու բարքի նկատմամբ: Ըստ ավանդության, Վայոց Ձոր հովվական այցելություններից մեկի ժամանակ Սյունեցին հանդիմանում է անբարո մի կնոջ, որը և դառնում է նրա մահվան պատճառը: Այդ կինը քնած ժամանակ «հարեալ գտուրն ի փողսն սրբոյն, հեղոյր զարիւնն անբիծ»¹⁰: Նրա մարմինը ամփոփում են ներկայիս Ս. Խաչ վանքում: Ստեփանոս Սյունեցու մահից հետո հզոր երկրաշարժ է տեղի ունենում, որին զոհ են գնում տասնյակ հազարավոր մարդիկ: Նրա աճյունը տեղափոխում են Թանահատի վանք: Ըստ Օրբելյանի՝ սա է պատճառը, որ վայրը կոչվեց Վայոց Ձոր:

Ստեփանոս Սյունեցու գործունեությունը, սակայն, չի սահմանափակվում միայն եկեղեցու բարեկարգությամբ: Նա հունարենից թարգմանում է «Գրոց Դիոնեսիոսի Արիսպագացոյ և Լուծմունք Մաքսիմոսի», «Մարդակազմութիւն Գրիգորի Նիւսացոյ», Կիւրդի՝ «Պարապմանց», «Սկիզբն մեկնութեան Յորայ», «Պատճառ և թելադրութիւն տեսլեանն Եզեկիէլի» գործերը: Եզեկիէլի և Դանիէլի մեկնություններից միայն հատվածներ են պահպանվել. «Մեկնեաց և գրեանս բազումս, զԱրարածքն, զՅոբն, զԵզեկիէլ և այլ բազումս. որոյ բանքն նշանաւոր ի մէջ այլոց մեկնչաց՝ փայլին որպէս ջահ պայծառ: Արար և ճառս բազումս»¹¹: Խոսքով Անձևացին նրան է վերագրում նաև ժամերգության մի մեկնություն՝ «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասացեալ, վասն նախերգանի աղօթից որ ի մէջ գիշերի կատարի»: Նրան են վերագրվում նաև դավանաբանական մի քանի թղթեր՝ ուղղված Գերմանոս հայրապետին՝ «Պատասխանի թղթոյն զոր գրեաց տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, առ տէր Գերմանոս Կոստանդնուպալսի հայրապետն, որք երկու բնութիւնս եւ երկուս ներգործութիւնս եւ երկուս կամս խոստովանին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ որք ի կենդանարար խորհուրդն ջուր խառնեն, հետեւեալք ժողովոյն Քաղկեդոնի», Անտիոքի պատրիարքին՝ «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի, պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալ էր»¹², որտեղ նա պաշտպանում է Յայ առաքելական եկեղեցու ծիսական ավանդությունները և տոները: Սյունեցուն են վերագրվում նաև «Յաղագս եկեղեցաւրինեաց կարգաց թէ զինչ է խորհուրդն. Վեմն անտաշ և անկոփ եղեալ ի հիմունս», «Խորհուրդ և կարգաւորութիւն եկեղեցոյ. Ուրախ լեր եկեղեցի սուրբ, իմանալի դրախտ աստուածագործ», «Նորին և այլոց վարդապետաց, ի նույն խորհուրդ եկեղեցոյ. Նաւ է եկեղեցի. նաւապետ հայր, նաւավար որդի, նաւահանգիստ սուրբ հոգին» ճառերը¹³: Թողել է նաև

⁹ **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, Ա հատոր, էջ 1009:

¹⁰ «Պատմութիւն նահանգին Սիսական...», էջ 182-185:

¹¹ Նույն տեղում, էջ 187:

¹² Տե՛ս Գիրք Թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 435, 494:

¹³ Տե՛ս **Գ. Չարպիանալեան**, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար), Վե-նետիկ, 1932, էջ 494:

քերականական աշխատություններ, որի համար և հավանաբար ստացել է *Քերթող* մականունը¹⁴:

Ստեփանոս Սյունեցուն են վերագրվում նաև շարականներ, կցուրդներ և տաղեր: Ինչպես արդեն նշվեց, շարականային կանոնը հայ հոգևոր երգասացության մեջ մտել է Սյունեցու շնորհիվ: Կ. Գանձակեցին վկայում է. «...արար և երգս հոգևորս քաղցր եղանակաւ շարականս և կցուրդս և այլ երգս...»¹⁵: Այս մասին ավելի մանրամասն հաղորդում է նաև Օրբելյանը. «Բաժանեաց և զուր ձայնսն և կարգեաց, շարեաց շարականս՝ զՅարութեան օրհնութիւնսն. երգեաց և կցուրդս քաղցրահամս, յարմարեաց և ստողոզին Յինանցն եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր և զՊահոցն, որ յաղուհացսն երգի»¹⁶:

Տարբեր ուսումնասիրողներ և ցուցակների հեղինակներ *Ավագ օրհնությունները*, նաև ուրիշ շարականներ վերագրում են Ստ. Սյունեցուն:

Սարգիս Երեցը նրան է վերագրում նաև «*զՅարութեան արհնութիւններն զեւթն ձայնին, և զԽաչի Սրբութիւնք սրբոցն Ստեփաննոս Սիւնեցին ասաց*»¹⁷, Գրիգոր Տաթևացին՝ «*Ձաւագ օրհնութիւնքն զԷ. ձայնին Ստեփաննոս Սիւնեցին*»¹⁸, Անանուն խմբագրություն (ԺԸ-ԺԹ դար)՝ «*Ստեփաննոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց, զեօթ ձայնսն աւագ օրհնութեանց*», «*Ստեփաննոս Սիւնեցի երկրորդն զՍրբութիւն սրբոց Խաչին, զոր ոմանք Ստեփաննոսի Մոկաց եպիսկոպոսի տան, որ Ապարանցի ևս կոչի*»¹⁹, Առաքել Սյունեցին՝ «*յԱռաքել Սիւնեաց վարդապետէ շինեալ ոտանաւոր շարականաց արարողաց*», Ստեփանոս Ձիք Ջուղայեցին՝ «*Ի Տէր Ստեփանոսէ գիտնական քահանայէ ասացեալ սակաւ ոտանաւորս յաղագս շարականաց, թէ յումմէ են երգեալ*»:

*Եւ զօրհնութիւնս որ մեծ կոչին
Սուրբ Ստեփանոսըն Սիւնեցին*»²⁰,

Հակոբ Սսեցին՝

*«Էրեց Յոհան այսպէս իմայ՝
Աւագ օրհնութեններն որ կայ,
Չայն եւթն Սիւնեաց Ստեփանոսայ,
Սուղ թէ մընաց նըշան չըկայ»*²¹:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 495:

¹⁵ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 72:

¹⁶ «Պատմութիւն նահանգին Սիսական...», էջ 138-139:

¹⁷ Տե՛ս Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռ. 2032, էջ 223բ–225ա, նաև՝

Յ. Ա. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Ա, Եր., 1959:

¹⁸ Տե՛ս Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռ. 813, էջ 302բ–303ա, ձեռ. 835, էջ 298բ:

¹⁹ Տե՛ս «Շարակնոց», Կ. Պոլիս, 1815, էջ 2-3:

²⁰ Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռ. 1424, էջ 247ա–249բ, ձեռ. 1593, էջ 301ա–302բ:

²¹ Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռ. 3107, էջ 137բ–139ա, ձեռ. 7217, էջ 70ա–72ա:

Անանուն խմբագրության մեջ, ինչպես նաև «Շարակնոցի»²² առաջաբանում նշվում է երկու Ստեփանոս Սյունեցու մասին՝ Ստ. Սյունեցի Ա (5-րդ դար) և Ստ. Սյունեցի Բ (8-րդ դար): Խոսքը միևնույն հեղինակի մասին է, քանի որ որևէ այլ աղբյուր կամ մատենագրական որևէ հիշատակություն չկա 5-րդ դարում ապրած և Սահակ-Մեսրոպին աշակերտած հեղինակի մասին: Բոլոր նշված հեղինակները և խմբագրությունները փաստում են, որ *Ավագ օրհնությունները՝ եօթն ձայնիցն*, պատկանում են Սյունեցու գրչին: Որոշ աղբյուրներ և բանասերներ՝ Դ. Տաշյան, Գ. Ջարբխանյան, Ա. Ջամինյան, Սահակ վրդ. Ամատունի, Մ. Աբեղյան, Դ. Աճառյան, Դ. Խաչկունց, Սյունեցուն համարում են նաև Մարտիրոսաց կարգի շարականների հեղինակ: Մարտիրոսաց կարգի շարականները վերագրվում են Պետրոս Գետադարձին: Միայն բանասիրական և լեզվական լուրջ ուսումնասիրությունը կարող է վերջնական պատասխան տալ այս հարցին:

Անդրադառնա՞նք խնդրո առարկա *Ավագ օրհնությունների*, որոնք բոլորը վերագրվում են Ստ. Սյունեցուն, բացի *Վառ ձայնից*, որը վերագրվում է Ներսես Շնորհալուն՝ «Ձաւագ օրհնութիւնս զեօթն ձայնիցն՝ Ստեփանոս Սիւնեցին...Չվառ ձայնն Աւագ օրհնութեանց՝ Ներսէս Կլայեցին...»²³: Այս վկայությունը նույնպես անհավանական է թվում, քանի որ Սյունեցին էր, որ կարգավորեց շարականները և մտցրեց *կանոնը*, ինչը՝ ախտի գրեր Ավագ օրհնությունների բոլոր շարականները, բացի *Վառ ձայնից*:

Յարութեան աւագ օրհնութիւնները իրենց ծավալով և կառուցվածքով տարբերվում են Շարակնոցի բոլոր օրհնություններից: Յուրաքանչյուր Ավագ օրհնություն կազմված է տասը հատվածից, իսկ վերջիններս՝ երեք տնից, այսինքն՝ ամեն մի հատվածն ինքնին առանձին շարական է: Հայկական շարականների համար նման մեծ ծավալը արտասովոր է, քանի որ, ինչպես հայտնի է, շարականները, չնչին բացառությամբ, կազմված են երեքական տնից²⁴: Քրիստոնեության վաղ շրջանում առավոտյան ժամերգությունների ժամանակ այդ *Օրհնությունների* փոխարեն *սաղմոսներ* էին երգվում: Սյունեցին մշակել է այդ սաղմոսների բովանդակությունը և հարմարեցրել Փրկչի կյանքին: Այդ օրհնություններից ամեն մեկն ունի իր ձայնը: *Ավագ օրհնությունների* յուրահատկություններից մեկն էլ այն է, որ ամեն մի հատված, ինչպես նշեցինք, ունի երեք տուն, որոնցից առաջինը նվիրված է սուրբ Երրորդությանը կամ նրա մեկ անձնավորությանը (Հորը, Որդուն, սուրբ Հոգուն), երկրորդը՝ Խաչին, և երրորդը՝ Աստվածածնին: Ահավասիկ մի օրինակ.

Նայեցարուք ժողովուրդք ի սքանչելիս աստուծոյ մերոյ. ունկնդիր լերուք հաւատացեալքք Քրիստոսի, եւ ի միտ առէք զարդարութիւն ճշմարտութեան. զի նա է յոյս հաւատացելոց:

Էութիւն անեղ անբաժանելի բանն աստըւած կամաւորութեամբ յանձն էառ ըզմահ խաչի, եւ թաղեցաւ ի նոր գերեզմանի. եւ յարութեամբն իւրով շնորհեաց մեզ կենդանութիւն:

²² Տե՛ս «Շարական հոգևոր երգոց», Երուսաղեմ, 1936:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 6:

²⁴ **Գ. Հակոբյան**, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Եր., 1980, էջ 151:

Ուրախ լեր մայր անճառ լուսոյ Սարիամ սուրբ աստուածածին. քանզի ի քեզ կրեցեր ըզհուր աստուածութեանըն լուսեղէն տաճար աստուծոյ բանին. առ նա միշտ բարեխօսեա վասն անճանց մերոց:

Առաջին ձայնի առաջին իսկ տողերից հնչում է օրհներգութիւնը և փառաբանութիւնը ի փառս Աստծո.

Երգեսցուք երգ նոր աստուծոյ փրկչին մերոյ, որ փրկեացն ի թըշնամւոյն ծառայութենէ զմեզ հրգօրն իւր կարողութեամբ. եւ ապրեցոյց փառաւորեալըն փառօք:

Ահա ԳԶ (III ձայն) երրորդ տունը, ուր հեղինակը դիմում է Աստվածածնին.

Աստուածածին, դու ես յոյս եւ ապաւեն խոստովանողացս ըզքեզ. որդւոյ քո եւ աստուծոյ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ:

Ստեփանոս Սյունեցուն վերագրվող *Ավագ օրհնութիւններն* ունեն ենթավերնագրեր, որոնք տեղ են գտել ձեռագիր Շարակնոցների լուսանցքներում: Օրհնության առաջին հիմնական հատվածին հաջորդող երկրորդ հատվածը կոչվում է «Նայեցայ» կամ «Նայեցարուք», երրորդը՝ «Հուր», չորրորդը՝ «Ծանեաք», հինգերորդը՝ «Հաստատութիւն» կամ «Հաստատեցան», վեցերորդը՝ «Ի գիշերաց», յոթերորդը՝ «Եսայի», ութերորդը՝ «Օրհնին կամ օրհնեսցուք», իններորդը՝ «Ի նեղութեան», տասներորդը՝ «Տէր, լուր»:

Հայ հոգևոր երգը, սկզբնավորվելով 5-րդ դարում ս. Սահակի և ս. Մեսրոպի կողմից, իր ուրույն զարգացումն ապրեց Մ. Խորենացու, Հ. Մանդակունու շնորհիվ, որոնք ճոխացրին ու զարգացրին հայ ինքնուրույն հոգևոր բանաստեղծությունը: Կրելով Աստվածաշնչի և մեկնողական գրականության խոր ազդեցությունը՝ մեր շարականագիր հեղինակները ստեղծեցին զուտ ազգային հոգևոր քնարերգություն: Ինչպես հայ, այնպես էլ օտար ազգերի հոգևոր երգերի վրա իրենց ուրույն ազդեցությունն են ունեցել Դավթի սաղմոսները և Հին Կտակարանի օրհնությունները, որոնցից նույնիսկ ամբողջական արտահայտություններ են տեղ գտել նշված երգերում: Հայ հոգևոր երգասացությունը նոր զարգացում ապրեց 7 - 8-րդ դարերում՝ Կոմիտաս Աղցեցու, Սահակ Ջորափորեցու, Հովհան Օձնեցու, Ստեփանոս Սյունեցու շնորհիվ: Չնայած զարգացման նոր աստիճանին՝ շարականների լեզուն շարունակեց պահպանել դասական գրաբարի բոլոր առանձնահատկությունները, որ պայմանավորված էր նաև եկեղեցական-դավանաբանական բովանդակությամբ: Բացառություն չեն նաև Ստ. Սյունեցուն վերագրվող «Կարգ Աւագ օրհնութեանց յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» շարականները: Այս շարականներում պահպանվում են դասական գրաբարի ձևաբանական, շարահյուսական ու ոճական առանձնահատկությունները: Հայոց լեզվի զարգացման պատմության Գ. Ջահուկյանի կատարած ամբողջական շրջաբաժանման համաձայն՝ ութերորդ դարի հայերենը հաջորդող երեք դարերի հետ միասին բնութագրվում է իբրև հին հայերենի նախամիջին ենթաշրջանի լեզվական վիճակ²⁵: Չնայած ութերորդ դարի հայերենը դասական գրաբարի զարգացման հետագա դրսևորումներից է, սակայն աչքի է ընկնում ոչ միայն գրական և խոսակցական ենթահամակարգերի, այլև առանձին գործառական ոճերի տարբերություններով, որոնք հիմնականում բխում են ժամանակի խոսակցա-

²⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Եր., 1964:

կան (թերևս նաև՝ բարբառային) ոլորտներից: Սրանք իրենց արտահայտությունն են գտել ժամանակի մատենագրական երկերում, օրինակ՝ Յ. Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» երկում²⁶, այնուամենայնիվ, ինչպես նշվեց, շարականներում իշխողը դասական գրաբարն է՝ աննշան շեղումներով:

Ուշագրավ է բառապաշարի հարստությունը: Նշենք, որ Ավագ օրհնություններում Սյունեցին գործածել է 4952 բառ:

Ավագ օրհնություններում արդեն նկատելի են հունաբան հայերենի նախամասնիկներով, հատկապես՝ վեր նախածանցով կազմված բառեր, օրինակ՝ *վերօրհնենք*, *վերօրհնեալ*, *վերականգնելով*, *վերակոչեաց*, *վերանստեալ*, *վերառաքել*, *ներմարդացեալ*, *պարածածկեցար*, *գերապանծ*, *վերերգենք*, *մակադրեալ*, *ներգործեալ* և այլն:

Գրաբարի բառակազմական կաղապարների բազմազանությունը, ինչպես նաև հիմքային զուգաձևությունների առատությունը նպաստում են անհատական բառակերտմանը և հնարավորություն տալիս ստեղծելու ոճական բազմազանության աղբյուր հանդիսացող հարանվանական և հոմանիշային շարքեր²⁷: Շարականագիր մեր բոլոր հեղինակները օգտվել են գրաբարի ընձեռած այս հնարավորությունից և, մնալով հանդերձ աստվածաբանական-դոգմատիկ սահմանների մեջ, լեզուն հարստացրել են նոր բառերով: Այս առումով բացառություն չէ նաև Սյունեցին: Ահա մի քանի նորակազմություններ, որոնք տեղ են գտել Ավագ օրհնություններում.

Գերապանծ՝ *Իջանելով քո ի դրժոխս գերապանծ իշխանութեամբ յաղթեցեր մահու հրզօր զօրութեամբ, կենագործելով զըմբռնեալսն առ ի նմանէ (945)*²⁸:

Անհծադրութիւն՝ *Որ բարձրացար ի խաչին յաղագս դատապարտութեանն Ադամայ, եւ բարձեր ըզփշաբեր անհծադրութիւնն հեղմամբ արեան քո սրբոյ. խաղաղացո զկեանքս մեր միայն մարդասէր (961)*:

Ներմարդացեալ՝ ...*Գովասանական ծայնիւ եղանակենք քեզ զերգս օրհնութեան ներմարդացեալ բանիդ աստուծոյ (963)*:

Վերերգել՝ *Քեզ միայնոյ մարմնացելոյդ ի սուրբ կուսէն օրհնութիւն ի բարձունքս վերերգենք ասելով. փառք քեզ Քրիստոս, որ եկիր կամաւ հօր կեցուցանել ըզմեզ (963)*:

Անտրամադրելի՝ *Իմանալի բանաւոր տախտակ անտրամադրելի տառիցըն մովսիսական օրինաց. որ զաստուածն ամենեցուն իսկապէս մարմնով ի գիրկըս քո բարձեր Մարիամ... (963)*:

ՆՅԲ-ում²⁹ այս բառերի առաջին հիշատակությունը, իբրև կանոն, քաղված է այս օրհնություններից:

Շարականների լեզուն հետաքրքիր է նաև բառակազմական առումով. հեղինակը լայնորեն կիրառել է և՛ բարդ, և՛ հատկապես ածանցավոր բառեր՝ ավելի արտահայտիչ դարձնելու համար ասելիքը:

²⁶ Տե՛ս Վ. Գամբարձումյան, Գովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Գայոց լեզվի պատմության հարցեր, պրակ I, Եր., 1981:

²⁷ Տե՛ս Լ. Ս. Գովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 92:

²⁸ «Շարական հոգևոր երգոց», Անթիլիաս, 1997 (այս գրքից մեջբերումների էջերը կտրվեն տեքստում):

²⁹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Եր., 1979, 1981:

ա) Միայն գոյական անուն բաղադրիչով կազմված իսկական բարդություններ են՝ *հրանիւթ, հրաբաժակ, լուսափայլ, դատակնիք* և այլն: Օր.՝ *Տըւող խաղաղութեան Քրիստոս որ զդատակնիք մահու լուծեր ի վերայ սուրբ խաչին. եւ հաշտեցուցեր ըզհայր ընդ արարածս. արարեր զխաղաղութիւն ի յերկինս եւ ի յերկրի (954):*

բ) Գոյականով և բայարմատով բաղադրված բարդություններից են՝ *աստուածածին, կենդանատու, կողահոս, մահաբեր, կենսաբեր, կենսատու, հրացայտ, լուսածեմ, բուսաբեր, լուսածին, փշաբեր* և այլն: Օր.՝ *Որ զկենդանարար մարմին եւ զարիւնըդ քո բաշխեցեր քաղցելոց. եւ ի խաչին բացեր ըզկողահոս աղբիւրդ, արբուցանելով տիեզերաց զանմահութիւն ի ճաշակմանէ մահաբեր պըտողոյն (946):*

Շարականներում տեղ են գտել նաև բառաբարդման այլ կաղապարներ, որոնք առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

Մեծ թիվ են կազմում, հատկապես, **ան, վեր, ներ** նախածանցներով կազմված բառերը՝ *վերօրհնել, անմահութիւն, անարատ, անդադար, աներեւոյթ, անհարսնացեալ, անճառապէս, գերապանծ, անմարմին, անճառելի, անհասութիւն, անքնին, անբաժանելի, անտրամադրելի, վերանստեալ, վերակոչել, անհամեմատ, անմեկնելի, անսպառ, անբոցակէզ, անպարտ, անիմանալի, ներգործեալ, ներմարդացեալ* և այլն: Հետաքրքրական է նշել, որ **ան** ժխտական նախածանցով կազմված բառերը այս շարականներում արտահայտում են դրական նշանակություն: Օր.՝ **Անարատ տաճար անվայրափակ բանին աստուծոյ Մարիամ սուրբ կոյս, բարեխօսեա առ տէր վասըն մերոյ փըրկութեան (962):** *Ի գիշերաց կանխեալ վերօրհնենք զանճառ տնօրէնութեան քո խորհուրդ, որ վասըն մեր խոնարհեցար ի յերկնից... (963): Անեղին եղեալ մարդ տեսեալ զարմանայր մարգարէն. եւ հեղուսեալ բեւեռօք զմարմինն ի խաչին, ներգործեալ ի մէջ երկուց կենդանեաց (964):*

Ինչպես մեր հոգևոր քնարերգության բոլոր տեսակները՝ հոգևոր երգ, տաղ, գանձ, այնպես էլ շարականները, աչքի են ընկնում պատկերավորման միջոցներով՝ այլաբերություններով: Բազմաթիվ են այլաբերության տեսակները, սակայն դրանցից ավելի հաճախակի և գործածական են մակդիրը, փոխաբերությունը, համեմատությունը, փոխանունությունը, այլաբանությունը, շրջասույթը, խորհրդանիշը³⁰:

Ավագ օրհնությունները հարուստ են այլաբերության այս բոլոր տեսակներով:

Շարականներն առավել հարուստ են մակդիրներով, որոնք շատ հաճախ կրկնվում են.

...եւ վերօրհնենք ըզքո զանճառ խոնարհութիւնդ:

...Ապրեցո՛ր եւ զիս յաներեւոյթ թշնամւոյն փըրկիչ գոլով, որ նըստիս ի քրովբէական յաթոռ:

Աստուածածին անհարսնացեալ սըրբուհի...:

Քանզի ի քեզ կրեցեր ըզհուր աստուածութեանըն լուսեղէն տաճար աստուծոյ բանին:

Անարատ տաճար աստուծոյ բանին, որ ըզնախամօրն Եւայի զանէժսըն բարձեր անճառելի ծընընդեամբն ի քէն...:

³⁰ Տե՛ս **Լ. Եգեկյան**, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 334:

Որ **զանարատ բազուկըս** քո տարածեցեր ի վերայ խաչին. ժողովել ըզհեռացեալսն **ամենակարող զօրութեամբ...**:

...Եւ փրկեաց զժողովուրդն ի ձեռաց փարաւոնի **ամենազօր եւ սքանչելի** փառօքն իւրովք:

Սքանչելի հուր աստուածութեան քո տէր տարածեցաւ առ հասարակ ընդ տիեզերս...:

Յորժամ հերձեաց Մովսէս **խաչանիչ գաւազանաւն**, պատառեցան անդունդք, եւ առաջնորդեցեր նոցա ամմեկնելի լոյսն:

Սա է բանն աստուած որ յառաջ քան գլաւիտեանս. **անձառելի գալըստեամբն** իւրով յայտնեցաւ տիեզերաց ծրնեալ ի կուսէն:

Կան նաև յուրօրինակ համեմատութիւններ.

Նայեցարուք ժողովուրդք ի սքանչելիս փրկութեան մերոյ. որ մարդասիրապէս բանն ի հօրէ որպէս ցօղ խոնարհեալ յերկիր:

Փոխաբերութիւնները նույնպէս իրենց ուրույն տեղն ունեն այս շարականներում.

Ուրախ լեր Մարիամ նորատունկ բուրաստան, երկնաբերձ աշտանակ, ձոյլ ոսկի եւ ձեմարան բանին աստուծոյ:

Իմանալի բանաւոր տախտակ անտրամադրելի տառիցքն մովսիսական օրինաց. որ զաստուածն ամենեցուն իսկապէս մարմնով ի գիրկըս քո բարձեր Մարիամ...:

Ավագ օրհնութիւնները հետաքրքիր են նաև գործածված շրջասութիւններով:

Նայեցարուք ի բարբառ մարգարէին եւ ի պատգամըս կենդանիս, որ քարոզեաց մեզ **ըզցօղըն կենաց** ի յերկնից:

Յարեւելից մեզ փայլեաց **արեգակն արդարութեան**. իշխանութեամբ բազմեալ տեսաք ըզնա ի կառքս խաչին. ծաներուք եւ տեսէք զի սքանչելիս արար տէր:

Ջշարչարանս եւ ըզմահ յանձն առեր **կենդանատու ամենեցուն**:

Ծագումն ի հօրէ փառակից սուրբ հոգւոյն, կենդանութիւն ազգի մարդկան, որ յարեաւն այսօր ի մեռելոց:

Սյունեցին գործածել է նաև յուրօրինակ **փոխանունություն**, որը կրկնվում է տարբեր հատվածներում:

Քանզի դու որ յառաջ քան գլաւիտեանս որդի հօր եւ հոգւոյն փառակից, եկեալ ի մէջ **երկուց կենդանեացն** երեւեալ. բարձրացար ի խաչին առնելով զհեծելութիւն փրկութեան. քանզի լուծեալ եղեն երկունըք մահու:

Տէր ըզլուր քո լըւայ վերօրհնեալդ ի բազմաչեայս. եւ տեսաք ըզքեզ մարմնով ի վերայ խաչին **ի մէջ երկուց կենդանեացքն**, զոր երգեաց Ամբակունըն նախնաց սուրբ հոգւովն:

Որ անքընհինդ ես յութեան ընդ հօր անբաժանելի բանդ աստուած. խոնարհեցար ի լրումն օրինաց եւ մարգարէից, եւ **ի մէջ երկուց կենդանեացքն** բարձրացեալ եղեր ի վերայ խաչին, զոր յառաջն երգեաց մարգարէն Ամբակուն:

Ստեփանոս Սյունեցու շարականներում յուրատեսակ ոճական արժէք ունեն նաև առանձին արտահայտությունների և նույնիսկ տողերի կրկնությունները, որոնք ընդհանրապէս հատուկ են հոգևոր երգերի բոլոր տեսակներին:

Չնայած աստվածաբանական-դոգմատիկ բովանդակային կաղապարմանը՝ *Ավագ օրհնությունների* լեզուն աչքի է ընկնում և՛ բառակազմական հետաքրքիր լուծումներով, և՛ պատկերավորման, արտահայտչական միջոցների վարպետ կիրառմամբ: Այս շարականներն իրենց ուրույն տեղն ունեն հայ բազմադարյան հոգևոր երգասացության գանձարանում:

Որպես եզրակացություն կարող ենք նշել հետևյալը:

Ստեփանոս Սյունեցու «Կարգ Աւագ օրհնութեանց յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» շարականները տարբերվում են *Շարակնոցի* բոլոր օրհնություններից: Յուրաքանչյուր *Ավագ օրհնություն* կազմված է տասը հատվածից, իսկ վերջիններս՝ երեք տնից, այսինքն՝ ամեն մի հատվածն ինքնին առանձին շարական է: Սյունեցին մեծապես օգտվել է Դավթի սաղմոսներից և Հին Կտակարանի օրհնություններից, որոնցից նույնիսկ ամբողջական արտահայտություններ են տեղ գտել այդ շարականներում: Ավագ օրհնություններում պահպանվել են դասական գրաբարի ձևաբանական, շարահյուսական ու ոճական առանձնահատկությունները: Պայմանավորված շարականների աստվածաբանական-դոգմատիկ բովանդակությամբ՝ գերիշխողը դասական գրաբարն է, սակայն զգալի է նաև հունարան դպրոցի ազդեցությունը:

Ավագ օրհնությունների բառապաշարը բավականին հարուստ է և ինքնատիպ: Բառակազմության առանձնահատկությունները համահունչ են դասական գրաբարի օրենքներին ու կանոններին: Այս շրջանակներում բառային բարդությունները ներկայացնում են որոշակի տիպերով պարփակված իմաստային խմբեր ու կոնկրետ կաղապարներ: Ածանցունը հայերենի նախորդ ենթաշրջանների համեմատությամբ էական տարբերություններ չի ներկայացնում, նկատելի է, որ գործածվել են արդեն մեծ տարածում գտած հունարան ածանցները:

Հատկանշական են նաև նորակազմությունները, հատկապես՝ իմաստային առունով և աստվածաբանական նշանակությամբ:

Ոճական առունով Ավագ օրհնությունների լեզուն, չնայած բովանդակային կաղապարմանը, աչքի է ընկնում պատկերավորման, արտահայտչական միջոցների վարպետ կիրառմամբ:

МАРИ САНТУРДЖЯН – Шараканы Степаноса Сюнеци. – Церковные гимны (шараканы) Степаноса Сюнеци отличаются от всех других в Шаракноце. Они известны под названием "Чин главных славословий на воскресение Господа нашего Иисуса Христа". Каждый главный гимн состоит из десяти частей, а каждая часть, в свою очередь, – из трёх строф, иными словами являет собой самостоятельный шаракан. В своих песнопениях Степанос опирался по преимуществу на псалмы Давида и другие тексты Ветхого Завета, из которых заимствовал иногда целые фразы. В языке "Главных славословий" сохраняются морфологические, синтаксические и стилистические особенности классического грабара. Его доминирующая роль обусловлена богословско-догматическим содержанием шараканов и стремлением сохранить традицию, но здесь чувствуется также влияние грекофильской школы.

Лексика "Главных славословий" богата и своеобразна. Словообразование отражает закономерности и модели классического грабара и определённые церковно-религиозные понятия, а также служит целям художественной выразительности. Суффиксация слов в шараканах не особенно отличается от предыдущего периода; отмечено также использование префиксов, созданных представителями грекофильской школы. Характерны и новообразования, особенно слова с богословским значением.

В стилистическом плане язык "Главных славословий" следует основным канонам обрядовых текстов, но выделяется образностью и разнообразием выразительных средств.

MARY SANTURJYAN –*The Sharakans by Stepan Syunetsi.* - "The Holy Hymn canons of Resurrection of our Lord Jesus Christ", sharakans by Stepan Syunetsi do differ among other hymns in the book of sharakans. Each Holy Hymn is composed of ten parts, each of which includes three couplets i.e. each part is an independent sharakan. Syunetsi extensively used the Psalms of David, as well as the hymns of the Old Testament.

In the Holy Hymns, morphological, syntactic, and stylistic peculiarities of classical Grabar are conserved. As it has been noted, due to theological-dogmatic content, modern Grabar prevails in sharakans, though the influence of Hellenistic school is already notable. The vocabulary of the Holy Hymns is quite rich and peculiar. Composition phenomena in word formation are in line with the rules and the laws of classical Grabar. Within these bounds, word composition is represented by semantic units and specific forms enclosed in certain types. In comparison with previous periods of Armenian, there are no significant differences in affixation except that common Greek affixes have been used. Neologisms, especially with semantic and theological meaning, are also frequent.

Stylistically, the language of the Holy Hymns, in spite of the modelling of the content, is notable for its skilful use of figurative-expressive means.